

ուացը հետ Հին ՞ ուղային ալ հոգե-
զաւակ մը կը սեպուին :

Իսյց այս օտարէն օտարացած Ճիւ-
զերը բաւական չէր ՞ ուղայի մը գաղ-
թականաց անուան՝ ևս առաւել իրենց
պիտոյիցը . ուրեմն մուզայն շարժեց
նոր սրտեր որ կալկաթայի մէջ Ար-
դասիրական Ճեմարան մը կանգնեցին ,
տպարան մը հաստատեցին , ինչպէս կը
վայլէր անանկ հանդիստ քնակութիւն
ունեցող Հայոց . և բաւական արդիւ-
նաւորեցան այն տարիները , որ դեռ ու-
րիշ շատ տեղուանք զուրկ էին այս բա-
նաւոր վայելմունքներէն :

Խակ երբոր Հայ մուզաները համար-
ձակութիւն առին թռչելու ուրիշ կող-
մեր ալ , և մեծ ու պղտի տաճարներ
կանգնել հայկական դարութեան , ըն-
կերութիւններ հաստատել , դպրոցներ
բանալ , օրագիրներ հրատարակել ,
պէտք էր որ հնդկաբնակ Հայերն ալ
վար չմնային ազգակցաց նոր յառաջա-
դիմութենէն . ուրեմն հոն տեղի մու-
զայն յորդոր եղաւ ու Արքարատեան
ընկերութիւն մը հաստատուեցաւ , տը-
պարան մ'ալ բացուեցաւ , Ազգասէր օ-
րագիր մ'ալ ընծայուեցաւ , որ իր զը-
ւարթուն ոգւովը , հայկական զգաց-
մամբք , սուր և զուարձալի դատողու-
թեամբք՝ համաեզու օրագրաց մէջ վե-
րադասներէն մէկն եղաւ : Ասիկայ պի-
տի ըլլար մեզի հին ՞ ուղային ընդհա-
նուր գաղթականաց թարգմանք և ծա-
նօթարարը :

Այսօր , ո՛հ , հնդկաբնակ
Հայ մուզայն երեսը սքօղած , միայն
արցունքներ դուրս կը բերէ . իր Ազգա-
սէր զաւակը հազիւ երկու տարի զուար-
թուն և ուժով կեանք մը քշելով , բա-
ւական լոյս և աւելի յօյս տալով , տար-
ւոյս մայիս ամսուն մէջ ինքն իր վախ-
ճանը կը գուժէ . որուն պատճառը թող-
լով որ իրմէն իմանան բանասէրք , մու-
զային հետ կը տրտմինք մեր Ազգասի-
րին վախճանին վրայ : Իսյց յիշելով
որ մուզայք անմահ են , իրենց ծնունդն
ալ կրնայ յարութիւն առնել , կը դառ-
նանք այն մուզային աղաչելու՝ որ եր-

կնաւոր շնչով մը նորէն տաքցրնէ վասէ-
իրմէ հովանաւորեալ սրտերը , որ իրենց
պատիւը Հին ՞ ուղային փառաց հետ
նորէն կանգնեն Ա երակենցաղ Ազգա-
սիրով :

ՃՈՒՂԱՑԵՑԻ ՄՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀՐԵՄԵ :

ՀՐԵՄԵՐԻ կ'անուանին ան ցուցան-
քաւոր այլանզակ գազանները որ աւելի
մտաց երեւակայեալ աշխարհին մէջ կը
գտնուին՝ քան թէ նիւթական երկրիս
վրայ . աս անուաննեալ հրէշից մէջ գլխա-
ւորնէ Յուշպարիէր որ սուրբ գիրքն ալ
կը յիշէ , անոր հետ մէկտեղ Համբառն
ալ , որ անշուշտ Յուշկապարիին մօտ
ազգականը պիտի ըլլայ . Յոյնք ու ա-
նոնցմէ առած ուրիշներն ալ Ալեքնէ կ'ա-
նուաննեն զասոնք . մեր մէջ գործա-
ծուած անունները հին Հայոց առաս-
պելաց մէջ ծածկուած են . միայն յայտ
նի է որ Յուշկապարիկը բարդութիւն
է Պայ , Պայիէ կամ Պայիէ անուան , ուս-
կից բարդած է Ա արդապայն ալ , ուսկից
խառնած է Ա արդապայդաղն : Ա սառ-
նուրդը տեղիք կուտայ կարծելու որ մեր
մէջ Պայ ըսուածը և լծորդները՝ օտա-
րաց մէջ Պան ըսուած անունն է , որով
հետև աս Պանը նոխազոտն ալ կ'ըսուի ,
Ա արդապայն քաղքն ալ նոյնը կը յիշե-
ցընէ , վասն զի ժաղ և նոխաղ նոյն է ,
որ է որչ և մէծ այծ . անոր համար Ա
ծածաբրդ ալ կ'ըսուի Պան իրեն ձագե-
րովը , որ Յունաց ստորին աստուածնե-
րուն կարգն էին և անտառներու մէջ կը
ընակէին : Ասկէց կրնանք ըսել թէ
Հայոց և ընդհանրապէս արևելեայ՝ ո-
րով սուրբ գրոց ալ Յուշկապարիկները
ցամաքային էին , իսկ Յոյնք ցամաքայ-
նոց միայն Պայ կամ Պան կ'ըսէին , և
իրենց բուն Յուշկապարիկ ըսածը աւե-

¹ Մարդապայ և Մարդապայքաղ , ըստ բանա-
սիրի ուրումն :

լի ջրային էր , և կերպարանքին կէս մէջ-քէն վար ձուկ երկու պողով դէպ 'ի վեր դարձած . ծովուն ամենէն վտանգաւոր տեղերը կը կենային ու անուշ կ'երգէին , որ լսողներուն քուն բերելով կ'ընկըզ-մէին նաւերուն հետ : Քանի մը բնապատումներ կը կարծեն որ հիները ծովային հորթը տեսնելով այնպիսի երեակայեալ հրէշներ հնարեցին . վասն զի ծովային հորթին գլուխը կլոր ըլլալով վիզը երկայն ու մարմինն ալ ձկան ձեռվ , կուրծքը քիչ մը ուռած , ծովէն ելլելու ատեն կրնայ մէկը հեռուէն իրենց հնարած կերպարանքովը կարծել : Ի այց ումանք ալ կ'ըսեն թէ Յուշկապարիկը լու փոխաքերեալ նշան մըն էր որով նաւորդաց զանազան վտանգները կ'ի մացընէին : Ի այց առասպելարկուք ասով ալ գոհ չըլլալով՝ Յուշկապարիկաց հայրենիքն ալ կը պատմեն . գլխաւոր իրեք յուշկապարիկ կը դնեն Ի՞քելով գետոյն և մուզայի մը ծնունդ , որ Վափրի կղզւոյն ժայռերուն եղերքը Ահապօլսոյ ծոցին մէջ կամ Ալարթենուպէի ու Աիկիլոյ եղերքները կը բնակէին . ուր որ իրենց ըսածին նայելով՝ հին ատենն ալ հիմայ ալ ձամբորդները ու նաւորդները անիմանալի ազդմամք մը հօն կը քշուին , ուր թմրութիւն մը վրանին գալով բոլորովին բաներնին գործքերնին ու նաև հայրենիքնին կը մոռնան : Իս հնարքը բանեցուցին կ'ըսէ Հոմերոս զի լիսեւմն ալ որսալու , բայց չիկրնալով յուսահատեցան և իրենք զիրենք ծովը նետեցին : Ի կելի խելքով կ'ըսէ հեղինակ մը թէ Յուշկապարիկ ըսածնին մարդիկներ են որ անզգոյշ նաւորդները խաբելով եղերքը կը մօտիկցընէն ու անոնց բաները կը յափտակէն , կամ թէ ծովու ասպատակներ են : Ոմանք ձկան տեղ թըռչնոյ մարմին կը կարծեն Յուշկապարիկի վարի կողմը . և թերեւս աս կը նշանակէն այն թռչնամարմին թագուհիներն ալ որ հայկական զրչագրաց ձակատներն կը զարդարեն :

1 Ինչպէս ոմանք ալ սփինդաց և ուրիշ հրէշեակայ կերպարանք կը բերեն :

Կակ սուրբ Գրոց յիշած Յուշկապարիկները և Նամբարուքը աւերակաց նշան և բնակիչ են , և ուրիշ բան չեն բայց եթէ ան ատենուան մարդկանց կարծեացը յարմարելու համար ըսուած , որ այլաբանութիւն մը սեպելու է աւերակաց սոսկում տալու . անոր համար մեր Պէտրոգ սկեռացի Ա արդապետը Լասայեայ մեկնութեան մէջ կ'ըսէ . “ Առութիւն ինչ ոչ են սոքա , այլ սոսկ , անուանք և լոկ համբաւք . զմարդկան սովորութեան անուանս դնէ 'ի նշան աւերածոյն Բաբելոնի ” :

ԱՌԵՂՋԵՐՈՒ :

ՅՈՒՇԿԱՊԱՐԿԻՆ պէս անուանի և տարակուսելի եղած , բայց աւելի ստոյգ կենդանի մը , որուն աւելի առասպելախառն քան թէ առասպելեալ պէտք է ըսել , է ԱՌԵՂՋԵՐՈՒՆ . որ ինչ որ հիները ստորագրած են և ինչ որ Անգղիոյ դրոշին վրայ նկարուած է , մտացածին կենդանի մըն է ձիու նման , Ճակտին մէջ երկայն եղջիւրով մը , որ նարվալի ժանիքը կը կարծուի , ինչպէս որ օրագրիս մէջ նարվալի վրայ խօսելու ատեն ըսեր ենք ' . ասոր համար անոր ծովային միեղջերու կ'ըսեն : Այէպէտ և հիներուն պատմած միեղջերուն առասպելեալ քան կ'երեւնայ , բայց պարզ երեակայութեան հնարք չէ , իրօք միեղջերու չորդուտանին կը կարծուի որ ըլլայ Աֆրիկէի ու Ասիոյ ներաերը , որ մէկ եղջիւր մը կամ ժանիք մը ունենայ գլխուն վրայ :

Եղուարդ Արփիփէլ Ճանապարհորդը որ 1824 Ահապօսի ջրվէժը քննելու գացեր էր , կը պատմէ թէ գերիէ մը լսեր է որ իրենց երկիրը կովու չափ չորքուտանի մը կայ Ահապօսմա ըսուած երէին պէս թեթևաշարժ , մորթը՝ կարձկեկ ու քիչ մը կարմրագոյն բաշով ծածկած , Ճակտին մինչև քիթն ալ Ճերմակ գիծ մը ունի եղեր , ասոր արուն կ'ըսէ շիտակ ու երկայն կոտոշ մը ունի Ճակ-